

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

### «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

#### 1. Անհրաժեշտությունը.

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է դատախազների վարձատրության պաշտոնային դրույքաչափերի վերանայման անհրաժեշտությամբ:

#### 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Դատախազների վարձատրության պաշտոնային դրույքաչափերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ առկա է դրանց վերանայման անհրաժեշտություն: Այս հետևությունը բխում է այն հանգամանքից, որ դատախազների վարձատրության պաշտոնային դրույքաչափերը հաճախ ավելի ցածր են ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան պաշտոնատար անձանց պաշտոնային դրույքաչափերից (օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչի պաշտոնային դրույքաչափի գործակիցը 6.75 է, ՀԲԾ ավագ քննիչինը՝ 7.00, իսկ ՀՀ գլխավոր դատախազության վարչության (բաժնի) դատախազինը՝ 6.00 և այլն): Բացի դրանից, օրինակ՝ պետական ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնող պետական ծառայողների գործակիցը՝ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազի համար սահմանված գործակցին հավասարազոր կամ նույնիսկ բարձր է, այլ կերպ ասած՝ դատախազության աշխատակազմի վարչության գլխավոր մասնագետի գործակիցը կարող է հասնել՝ 5.34-ի, իսկ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազի գործակիցը 4.5, հատուկ քննչական ծառայության ստորին օղակի պաշտոնի սանդղակը սկսվում է 6 գործակցից, իսկ քննչական կոմիտեի քննիչին ստորին օղակի պաշտոնի գործակիցը՝ չնայած՝ 4.25 է նախատեսված, այնուամենայնիվ, ՀՀ կառավարության «ՀՀ քննչական կոմիտեի կառուցվածքը, անվանացանկը և հաստիքացուցակը հաստատելու մասին» 2014 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 919-Ա որոշմամբ մարզային վարչության բաժնի ավագ քննիչի և քննիչի պաշտոններ սահմանված չեն, այլ՝ միայն մարզային վարչության քննիչի պաշտոն, որի գործակիցը՝ 5.00 է, իսկ ավագ քննիչինը, որպիսի մարզային վարչություններում մեծամասնությունն է՝ 5.50 է, ինչը չի կարող իրավաչափ լինել: Իրավաչափ չի կարող լինել նաև այն, որ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազության ավագ դատախազի և դատախազի գործակիցները համապատասխանաբար՝ 5.00 և 4.50 է, իսկ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչինը և քննիչինը՝ 5.50 և 5.00 է:

Բացի դրանից, համաչափ չէ նաև անցումը բաժնի ավագ դատախազի և բաժնի պետի համար սահմանված գործակիցների՝ համապատասխանաբար 6.50 և 7.00, այն

դեպքում երբ վարչության և բաժնի դատախազների և ավագ դատախազների գործակիցները հավասարազոր են, ընդ որում բաժիններն էլ վարչության կազմում չեն գտնվում:

Հարկ է նկատել, որ դատախազության ըստ պաշտոնների սահմանված գործակիցները հակասում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքով դատախազության համար սահմանված պաշտոնների դասակարգմանը:

Նշված անհրավաչափությունը հաստատվում է նաև գործող օրենսդրությամբ դատախազներին վերապահված գործառույթների բովանդակությամբ և բարձր պատասխանատվությամբ, որի դրսևորումներից է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, առ այն որ հսկողություն իրականացնող դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար: Հենց նշված հանգամանքներով է անձը կանխատեսում դատախազի պաշտոնում նշանակվելու և պաշտոնավարելու իր հնարավորությունը, և հենց նշված հանգամանքով է, որ օրենսդիրը սահմանում է դատախազի պաշտոն զբաղեցնելու բարձր պահանջներ և բավականին բարդ ընթացակարգ:

Նման կարգավորումը հակասում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ ենթակետերին, որոնց համաձայն՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքներն են՝

1) պետական պաշտոններ զբաղեցնող անձանց պարտականություններին, պատասխանատվությանը համապատասխանող հիմնական աշխատավարձի ապահովումը.

2) պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափերի հիմնավորված տարբերակման ապահովումը:

Գործող իրավակարգավորման ընդհանուր ուսումնասիրությունից հետևում է, որ հանցավորության դեմ պայքարի գործում ներգրավված մարմինների վարձատրության հարցում օրենսդիրը որդեգրել է հիմնականում նույնական գործակցի սահմանման մոտեցումը: Սակայն այս մոտեցումը չի համապատասխանում դատախազների պարտականություններին և պատասխանատվությանը, քանի որ ՀՀ քննչական կոմիտեն ու ՀՀ հատուկ քննչական ծառայությունը պատասխանատվություն են կրում քրեական գործերով պատշաճ նախաքննության իրականացման համար, ապա ՀՀ դատախազությունը ոչ միայն հսկողություն է իրականացնում այդ ոլորտի նկատմամբ՝ ունենալով գործով վերջնական որոշում կայացնելու լիազորություններ, այլև մշակում ու իրականացնում է քրեական քաղաքականություն, ակտիվ ներգրավվածություն ունի քրեական վարույթի ողջ ընթացքի նկատմամբ՝ սկսած հետաքննության փուլից մինչև պատժի ու դատական որոշումների կատարման փուլը և պատասխանատվություն է կրում այդ ողջ գործընթացում օրինականության, հանրային շահի պաշտպանության ու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման համար: Բացի

դրանից, դատախազությունը, ի տարբերություն նախաքննական մարմինների, ավանդաբար ունենալով սահմանադրական առանձնահատուկ կարգավիճակ, իրականացնում է նաև պետության շահերի պաշտպանության գործառույթ, ինչպես նաև՝ նախաքննության փուլում պատասխանատու է միջազգային իրավական օգնության տրամադրման համար: Այսինքն, դատախազների պարտականությունների ու պատասխանատվության ծավալն ավելի մեծ է, քան վերոհիշյալ մարմիններինը:

Բացի դրանից, դատախազների վարձատրության գործակիցների սահմանման հիմքում որպես ելակետ պետք է ընդունվի ոչ թե հանցավորության դեմ պայքարում ներգրավված նախաքննական մարմինների վարձատրությունը, այլ դատարանները: Եթե ՀՀ Գլխավոր դատախազի, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի ու ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի վարձատրությունների գործակիցների դեպքում այս մոտեցումը պահպանվել է, ապա արդեն ծառայողական ենթակայության հաջորդ աստիճանին այս մոտեցումը չի պահպանվել:

Դատախազներին իրենց պարտականություններին համապատասխան ու դատավորների հետ հավասար վարձատրություն տրամադրելու պահանջը ոչ միայն բխում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքներից, այլև՝ այս հարցում միջազգային չափանիշներից:

Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2000 թվականի հոկտեմբերի 6-ի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» ընդունված թիվ 19 հանձնարարականում ամրագրված է դատավորների և դատախազների կարգավիճակի հետ կապված նույնատիպ երաշխիքներ և պահանջներ, մասնավորապես՝ կարգապահության, ռոտացիայի առկայության անհրաժեշտությունը, վարձատրության, դատավորների և դատախազների համար միասնական մասնագիտական պատրաստում անցնելը, հավասար հնարավորությունն ընդգրկվելու ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների ցուցակում և այլն: Մասնավորապես, «Իրենց պարտականությունները կատարելիս դատախազների անվտանգության երաշխիքները» 5-րդ բաժնի «d» ենթակետի համաձայն՝ դատախազների աշխատանքի պայմանները, ինչպիսիք են աշխատավարձը, պաշտոնավարման ժամկետը և կենսաթոշակը, ինչպես նաև կենսաթոշակի անցնելու տարիքը համապատասխանում են նրանց բարձր դիրքին: Իսկ հանձնարարականին կից բացատրական գրության համաձայն՝ դատախազների կարգավիճակի, պարգևավճարի և կենսաթոշակի հարցը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ դատավորների և դատախազների միջև հավասարակշռության պահպանման կարևորությունը, քանզի վերջիններս մեծ դեր են խաղում քրեական արդարադատության համակարգում: Վերը նշված Հանձնարարականի 18-րդ կետում սահմանված է, որ դատախազների և դատավորների պարտականությունները ունեն փոխլրացնող բնույթ և այդ երկու մասնագիտությունների համար պետք է գոյություն ունենան մասնագիտական պատրաստվածության, իրավասության և կարգավիճակի համանման երաշխիքներ:

Իսկ «Բորդոյի հռչակագրի» («Ղատավորները և դատախազները ժողովրդավարական հասարակությունում», Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի (CCJE) կարծիք N 12/2009, Եվրոպական դատախազների խորհրդակցական խորհրդի (CCPE) կարծիք N 4/2009 նիստ 1075, 20 հունվարի, 2010) 8-րդ կետի և հռչակագրին կից բացատրական գրության համաձայն՝ վերը նշված սկզբունքների իրականացումը պահանջում է, որ դատախազները օրենքով լինեն առավելագույնս պաշտպանված, ինչպես դա արված է դատավորների դեպքում: Ղատավորների և դատախազների առաքելությունների փոխլրացումն ու նմանությունը առաջացնում է նրանց կարգավիճակի հարցում նույնատիպ պահանջներ և երաշխիքներ, մասնավորապես, հավաքագրման, կարիերայի, կարգապահության, փոխադրման, վարձատրության, գործառույթների դադարեցման, մասնագիտական ասոցիացիաներ ստեղծելու ազատության վերաբերյալ:

Եվրոպայի Խորհրդի Իրավունքի միջոցով հանուն ժողովրդավարության հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից 2015 թվականի հունիսի 30-ին ընդունված «Ղատախազների վերաբերյալ զեկույցների ու կարծիքների մասին» ժողովածուի 3.2.1 կետի համաձայն՝ նույնիսկ այն համակարգերում, որտեղ դատախազությունը դատական համակարգի մաս չի կազմում, դատախազներից պահանջվում է գործել որպես դատարան: Հետևաբար կարևոր է, որ դատախազներին ներկայացվող պահանջներն ու պահանջվող որակները նույնական լինեն նրանց հետ, որոնք ներկայացվում են դատավորներին (CDL-AD(2014)029, Opinion on the Draft amendments to the Law on the State Prosecutorial Council of Serbia, p. 11 and 12, CDL-AD(2014)042, Interim Opinion on the Draft Law on the State Prosecution Office of Montenegro, p. 17):

Նույն ժողովածուի 3.2.3 կետի համաձայն՝ ինչպես դատավորների դեպքում, այնպես էլ դատախազների պարագայում քրեական արդարադատության համակարգում խնդիրների արդյունավետ իրականացման համար վարձատրությունը էական նշանակություն ունի: Պատշաճ վարձատրությունը նաև անհրաժեշտ է կոռուպցիոն ռիսկերի վտանգը կրճատելու համար (CDL-AD(2010)040, Report on European Standards as regards the Independence of the Judicial System: Part II - the Prosecution Service, p. 69) <sup>1</sup>:

Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Ղատախազների վերաբերյալ եվրոպական նորմերի ու սկզբունքների մասին» թիվ 9 կարծիքի Հռոմի Խարտիայի 4-րդ կետի համաձայն՝ դատախազության անկախությունն ու ինքնուրույնությունը դատական իշխանության անկախության անհրաժեշտ արդյունքն է: Հետևաբար, դատախազության անկախությունն ու ինքնուրույնությունը կատարելագործելու ընդհանուր միտումն անհրաժեշտ է խրախուսել:

<sup>1</sup> Տես [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)009-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)009-e)

Նույն կարծիքի ժանոթագրության 33-րդ կետի համաձայն՝ դատախազների անկախությունը, որը էական նշանակություն ունի իրավունքի գերակայության համար, պետք է երաշխավորվի օրենքով և հնարավոր ամենաբարձր մակարդակով, նույնական դատավորների անկախությանը ներկայացվող չափանիշներին: Այնուհետև՝ 75-76-րդ կետերում սահմանվում է, որ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ապահովելու, որ դատախազներն ունենան ծառայության ողջամիտ պայմաններ, ինչպիսիք են վարձատրությունը և թոշակը, որոնք համաչափ կլինեն նրանց որոշիչ դերին: Ծառայության պայմանները պետք է արտացոլեն դատախազության կարևորությունն ու արժանապատվությունը և հարգանք ներշնչեն<sup>2</sup>:

Դատախազների պատշաճ վարձատրությունը նաև վկայում է նրանց կողմից կատարվող գործառույթների ու նրանց դերի կարևորության մասին, ինչպես նաև կրճատում է կոռուպցիոն ռիսկերի վտանգը<sup>3</sup>:

Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդի Քրեական արդարադատության և հանցավորության կանխարգելման հանձնաժողովի կողմից 2008 թվականի ապրիլի 17-ին ընդունված՝ «Դատախազության իրավասությունն ու ամբողջականությունը կատարելագործելու միջոցով իրավունքի գերակայությունն ամրապնդելու մասին» ռեզոլյուցիայի հավելվածի 6-րդ մասի c) կետի համաձայն՝ որպեսզի հնարավոր լինել երաշխավորել, որ դատախազները կարողանան իրենց պարտականություններն անկախ ու այս չափանիշներին համապատասխան իրականացնել, վերջիններս պետք է պաշտպանված լինեն կառավարությունների կողմից կամայական գործողություններից: Մասնավորապես նրանք պետք է օժտված լինեն իրենց պարտականություններն իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններով և պատշաճ վարձատրությամբ, որը համաչափ կլինի նրանց կարգավիճակին<sup>4</sup>:

Այս բոլոր փաստաթղթերը ոչ միայն վկայում են դատախազներին իրենց պարտականություններին ու կարգավիճակին համապատասխան պատշաճ վարձատրություն տրամադրելու անհրաժեշտության մասին, այլև՝ դատախազների անկախության (որը ենթադրում է նաև ֆինանսական անկախություն) համար պահանջում են ներկայացնել նույնական չափանիշներ, որոնք գործում են դատավորների համար: Ընդ որում, հարկ է նկատել, որ արտասահմանյան երկրների փորձը նույնպես վկայում է նշված համամասնության ապահովումը դատավորների և դատախազների դեպքում, օրինակ՝ Լատվիա, Մոլդովա, Ռուսաստան և այլն:

---

<sup>2</sup> Տես նաև Committee of Ministers of the Council of Europe, Recommendation Rec (2000)19 on the role of public prosecution in criminal justice system, 6 October 2000, p. 5d, Venice Commission, Report on European Standards as Regards the Independence of the Judicial System: Part II – the Prosecution Service, CDL-AD (2010)040, 3 January 2011, p. 69, Human Rights Council, Report of the Special Rapporteur on the independence of judges and lawyers, Gabriela Knaul, A/HRC/20/19, 7 June 2012, p. 71:

<sup>3</sup> Տես

[https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CCPE\(2014\)4&Language=lanEnglish&Ver=original&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CCPE(2014)4&Language=lanEnglish&Ver=original&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864)

<sup>4</sup> Տես [http://www.iap-association.org/getattachment/Resources-Documentation/IAP-Standards/UN-Resolution/UN\\_Resolution\\_IAP\\_Standards\\_draft\\_as\\_approved-1.pdf.aspx](http://www.iap-association.org/getattachment/Resources-Documentation/IAP-Standards/UN-Resolution/UN_Resolution_IAP_Standards_draft_as_approved-1.pdf.aspx)

Հետևաբար, քրեական արդարադատության համակարգում դատախազների վարձատրության հիմքում որպես ելակետ պետք է ընդունվի ոչ թե նախաքննական մյուս մարմինների համար սահմանված չափանիշները, այլ՝ դատարանների համար սահմանված չափանիշները:

### **3. Կարգավորման նպատակը և բնույթը.**

««Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը նպատակ է հետապնդում հնարավորության սահմաններում ապահովել դատախազների պատշաճ վարձատրությունը նրանց կողմից կատարվող գործառույթներին ու ստանձնած պատասխանատվությանը համապատասխան, ինչպես նաև դատախազների վարձատրության համակարգը համապատասխանեցնել պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքներին՝ վերացնելով անհամապատասխանությունները:

Այդ նպատակի իրականացման համար առաջարկվում է.

- ՀՀ մարզի դատախազի, կայազորի զինվորական դատախազի և Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազի վարձատրության գործակիցը 7.50-ից բարձրացնել՝ հասցնելով՝ 8.00 գործակցի,

- գլխավոր դատախազության բաժնի պետի համար սահմանել առանձին տող և նրա վարձատրության գործակիցը 7.00-ից բարձրացնել՝ հասցնելով 7.50 գործակցի,

- գլխավոր դատախազության վարչության պետի տեղակալի, գլխավոր դատախազության ավագ դատախազի, Երևան քաղաքի դատախազի տեղակալի վարձատրության գործակիցը 7.00-ից բարձրացնել՝ հասցնելով 7.25 գործակցի,

- գլխավոր դատախազության վարչության, ինչպես նաև բաժնի ավագ դատախազի, մարզի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազի տեղակալի վարձատրության գործակիցը 6.50-ից բարձրացնել՝ հասցնելով 7.00 գործակցի,

- զինվորական կենտրոնական դատախազության բաժնի պետի համար սահմանել առանձին տող և նրա վարձատրության գործակիցը 6.00-ից բարձրացնել՝ հասցնելով 7.00 գործակցի,

- գլխավոր դատախազության դատախազի, գլխավոր դատախազության վարչության, ինչպես նաև բաժնի դատախազի, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազի վարձատրության գործակիցը 6.00-ից բարձրացնել՝ հասցնելով 6.75 գործակցի,

- Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի ավագ դատախազի վարձատրության գործակիցը 5.50-ից բարձրացնել՝ հասցնելով 6.50 գործակցի,

- Երևան քաղաքի դատախազության դատախազի, մարզի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների ավագ

դատախազների, զինվորական կենտրոնական դատախազության դատախազի, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազի վարձատրության գործակիցը 5.00-ից բարձրացնել՝ հասցնելով 6.25 գործակցի,

- Մարզի, Երևան քաղաքի տարածքների, կայազորի զինվորական դատախազության դատախազի վարձատրության գործակիցը 4.50-ից բարձրացնել՝ հասցնելով 6.00 գործակցի:

#### **5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի կողմից:

#### **6. Ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունմամբ պայմանավորված ակնկալվող արդյունքը կլինի դատախազների պատշաճ վարձատրության ապահովման պահանջի կատարումն ու այս ոլորտում վարձատրության գործակիցների համապատասխանեցումը պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքներին: Բացի դրանից, դատախազների վարձատրության բարձրացումն ավելի գրավիչ կդարձնի դատախազի աշխատանքը, ինչը թույլ կտա ներգրավել որակյալ մասնագետներ դատախազության համակարգում՝ բարձրացնելով դատախազության գործունեության որակները: